ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍԻՐՈՒՆՅԱՆ ՄԱՐԻԱՄ ԱՐԱՄԻ

ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՕԼԴԻՆԳՏՈՆԻ ՎԵՊԵՐԸ. ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐ

Ժ. 01.07 - «ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ
ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2022

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:
Գիտական ղեկավար՝

բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

Առաքելյան Արա Հրաչիկի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

Գայանե Վիուլի Եղիազարյան

բանասիրական գիտությունների
թեկնածու, դոցենտ

Կարինե Հրաչիկի Գուլանյան

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան

գրականության ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2022թ. մայիսի 3-ին՝ ժամը 14^{30}-ին, ԵՊՀ-ում գործող՝ ՀՀ ԲՈԿ-ի 066 մասնագիտական խորհրդի նիստում: Հասցեն՝ ք. Երևան, Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ-ի եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի մասնաշենք, 422 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2022 թվականի մարտի 25-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝
բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ **Ա. Վ. ԵԳԱՆՅԱՆ**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսությունը նվիրված է 20-րդ դարի անգլիացի բանաստեղծ, արձակագիր և գրաքննադատ **Ռիչարդ Օլդինգտոնի** (1892-1962) ստեղծագործական արվեստի քննությանը, ավելի որոշ՝ նրա՝ պատերազմի թեման ներառող վիպաշխարհի բարոյական և սոցիալական ասպեկտների վերհանմանը:

Ճակատագրի բերումով այս գրողին վիճակված էր ստեղծագործելու այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ պատերազմը ներխուժում է կյանք, գրականություն և որոշում վերջինիս թեմատիկան: Նրա երկերը բացահայտում են այնպիսի հիմնախնդիրներ, ինչպիսիք են անհատի ներաշխարհի փլուզումը պատերազմյան և հետպատերազմյան ժամանակահատվածում, պատերազմի բարոյական ու սոցիալական ասպեկտները: Օլդինգտոնն իր արվեստով ներկայացնում է մարդկությանը բաժին ընկած բարդ իրավիճակները, անհատի ու հասարակության բախումը, որը և նրան դարձնում է անգլիացի առաջադեմ գրողներից մեկը:

Ատենախոսության մեջ ամենից առաջ բացահայտվում են Օլդինգտոնի տեղն ու դերը ժամանակի անգլիական գրականության մեջ: Նպատակահարմար է գտնվել նրա վեպերը քննել ըստ ժամանակային երեք շրջափուլի՝ նախապատերազմյան շրջան, բուն պատերազմյան և հետպատերազմյան: Իհարկե, «կորուսյալ սերունդն» անմիջականորեն կապվում է պատերազմյան և հետպատերազմյան շրջանների հետ, սակայն Օլդինգտոնի ստեղծագործության դեպքում նախապատերազմյան շրջանն անքակտելիորեն կապված է մյուս երկուսին, և այդ ընդհանրական շարունակությամբ է հնարավոր դառնում ամբողջական պատկերացում կազմելու նշյալ սերնդի, նրա գոյակերպի մասին: Ասվածն առավելապես վերաբերում է կենտրոնական՝ «Հերոսի մահը», այնուհետև «Բոլոր մարդիկ թշնամիներ են» վեպերին: Օլդինգտոնի արձակի ինքնատիպությունը մատնանշելու և վեր հանելու նպատակով գրողի երկերն ուսումնասիրվել են նրան ժամանակակից այլ գրողների զուգադրմամբ: Բացի այդ՝ բացահայտվել են նաև վիպասանի աշխարհընկալումը, նրա գեղարվեստական ու գեղագիտական ճաշակը:

ԹԵՄԱՅԻ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքի թեման **արդիական է**, քանի որ պատերազմները, դժբախտաբար, բացառություն չեն նաև մեր օրերում: Հեղինակի՝ հակապատերազմական տրամադրությունների բացահայտումներն ու քննարկվող խնդիրները՝ անհատ-անհատ, անհատ-հասարակություն, անհատ-միջավայր, կարող են օգտակար լինել մեզանում եղած կաթվածահար վիճակը, մարդու սոցիալականացման նույնպիսի խնդիրները լուծելու, հաղթահարելու իմաստով: Մարդկությունը 20-րդ դարում ականատեսն ու մասնակիցը եղավ համաշխարհային երկու պատերազմների, տարածքային, հատվածային բազում բախումների, և ցավալի է, որ 21-րդ դարը ևս մարդկությանը չի ձերբազատում պատերազմ-չարիքի հետ բախման ան-

կանխատեսելիությունից՝ լինի դա քառօրյա թե ավելի երկարատև: Ցանկացած պատերազմ իր հետ բերում է մարդկային ողբերգություն, ճակատագրերի խեղում, հոգեբանական դեֆորմացիա:

ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության ուսումնասիրության ***առարկան*** Ռ. Օլդինգտոնի ստեղծագործությունն է, մասնավորապես «կորուսյալ սերնդի» ճակատագիրը նրա վեպերում: Ներկայացվում են նախապատերազմյան շրջանում նշյալ սերնդի կյանքը, պատերազմի աղետալի ժամանակահատվածն ու ազդեցությունները նրա հոգեմտավոր աշխարհի վրա, հետպատերազմյան շրջանում այդ սերնդի գոյատևման կերպը, ասել է թե՝ Առաջին և Երկրորդ աշխարհամարտերի միջակայքում հայտնված սերնդի կենսապատումն իր ամբողջության մեջ, ապա նոր սերնդի՝ ապագայի վերափոխման մոդելն ընդդեմ տիրող մոդելների:

Ուսումնասիրության ***նպատակն է*** համակողմանիորեն քննության առնել Օլդինգտոնի վեպերը, պատկերել Առաջին աշխարհամարտի հետևանքով առաջացած, այսպես կոչված, «կորուսյալ սերնդի» ճակատագրի ընթացքն ու ներկայացնել այդ սերնդի բազմապիսի խնդիրների ոլորտը գրողի վեպերում: Հիմնական նպատակից ելնելով՝ աշխատանքում առաջ են քաշվել ***գիտական*** հետևյալ ***խնդիրները***.

1. Օլդինգտոնի ստեղծագործական շրջանների զարգացման համատեքստում զուգահեռներ անցկացնել նրա և իր ժամանակակիցների, այդ թվում՝ Է. Հեմինգուեյի, Է. Մ. Ռեմարկի և այլոց հետ.
2. ներկայացնել գրողին՝ անդրադարձ կատարելով վերջինիս առանձնահատուկ ստեղծագործական մտածողությանը, բացահայտել նրա դերն անգլիական գրականության զարգացման գործում.
3. ցույց տալ նախապատերազմյան շրջանում «կորուսյալ սերնդի» կեցության կերպն ու հասարակության մեջ առկա հիմնախնդիրների ոլորտը.
4. գրողի պատկերած մարդ-պատերազմ հարթության վրա ներկայացնել անգլիական հասարակության պահվածքն ու դրա հետևանքներն անհատի ճակատագրի հետագա ընթացքի վրա.
5. ներկայացնելով անհատի դրաման՝ քննության առնել պատերազմի ժամանակ անհատի ֆիզիկական ու հոգեկան տանջանքի, հեղաշրջումների ընթացքն ու դրանից բխող հետևանքներն ըստ Օլդինգտոնի.
6. տեսանելի դարձնել հետպատերազմյան մարդու խնդիրը հոգեմտավոր, սոցիալական տեղատվություններից հետո, ներկայացնել նոր սերնդին՝ գալիքի նորանոր սպասումների ու կյանքի վերափոխման նախաշեմին:

ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Աշխատությունը կատարված է վերլուծական, տիպաբանական և պատմահամեմատական ***մեթոդներով***: Գրողի երկերը քննվում են համակողմանիորեն՝ ըստ տվյալ գլխի նպատակադրման ու աշխատանքի առջև դրված խնդիրների, նաև տրվում է Օլդինգտոնի և իր ժամանակակից մյուս գրողների ստեղծագործության համեմատական վերլուծությունը: Առաջնորդվելով պատմահամեմատական մեթոդով՝ բացահայտվել է հասարակական մի շարք երևույթների էությունը, վերլուծվել են քննարկվող ժամանակաշրջանը, դրա ներքին յուրահատկություններն ու գրական-գեղարվեստական համարժեք մոդելները:

Հետազոտության ընթացքում հաշվի են առնվել գրականագիտության ինչպես նախկին, այնպես էլ արդի փորձը, ձեռքբերումներն ու պահանջները, մասնավորապես համեմատական-վերլուծական մեթոդի սկզբունքները, որոնք դարձել են տեսական-մեթոդաբանական ուղեցույց:

ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Օլդինգտոնը գրեթե անծանոթ է հայ ընթերցողին, և հայ գրականագիտությունն էլ դեռևս հատուկ ուսումնասիրության առարկա չի դարձրել նրա ստեղծագործությունը, որը, սակայն, ուսանելի է և համամարդկային: Ահա **սույն աշխատությունը միտված է լրացնելու ցայսօր առկա բացը**:

Օլդինգտոնի կյանքի ու գրական ժառանգության վերաբերյալ գրված որոշ աշխատություններ բովանդակում են հետաքրքիր տվյալներ գրողի անձնական ու ստեղծագործական կյանքի մասին, տեղեկություններ տրամադրում դարաշրջանի անցուդարձերի վերաբերյալ: Առկա են նաև տեսական, գրականագիտական, քննադատական լրջմիտ վերլուծություններ: Որքան էլ տարօրինակ է, անգլալեզու գիտական միջավայրում, սակայն, այս թեմայով լայնածավալ աշխատություններ չեն գրվել: Անգամ օլդինգտոնագետների՝ Ռ. Սմիթի, Թ. Մաքգրիվիի ուսումնասիրությունները[1] ամբողջովին չեն սպառում մեր թեմայի հիմնադրույթները: Հատկապես 1960-ականներից հետո այս հեղինակի վեպերի վերաբերյալ անգլիական գրականագիտությունն անհասկանալի լռություն է պահպանում, մինչդեռ Օլդինգտոնն իր ժամանակին վայելում էր համաշխարհային հռչակ. նրա վեպերը թարգմանվում էին բազմաթիվ լեզուներով, արժանանում տարբեր երկրների ընթերցողների հետաքրքրությանը: Այնուամենայնիվ, անհերքելի է, որ թե՛ կենդանության օրոք և թե՛ մահից հետո ու նույնիսկ մինչև այժմ այս երևելի գրողի երկերը, հատկապես արձակը, պատշաճ ուսումնասիրության չեն արժանացել: Նրա ստեղծագործությանը նվիրված ոչ մեծաքանակ ուսումնասիրություններում ուշադրությունը կենտրոնացվում է հիմնականում պոեզիայի ու

[1] Տե՛ս **Smith R. E.**, Richard Aldington, Boston: Twayne publishers, 1977, **McGreevy T.**, Richard Aldington An Englishman, London: Chatto and Windus, 1931

փոքր կտավի գործերի՝ պատերազմի թեմայով գրված պատմվածքների վրա: Անգլիական գրականագիտության համար էլ Օլդինգտոնն ամենից առաջ պոետ է, իսկ արձակին անդրադարձ կատարելու դեպքում դիտարկվում է որպես «Հերոսի մահը» վեպի հեղինակ: «Նրա «Հերոսի մահը» վեպը մեծ հետաքրքրություն առաջացրեց 1929-ին, բայց դրանից հետո Օլդինգտոնը լիովին մոռացվեց»[2],- նկատում է Բ. Բերգանզին:

Ա. Քերշոն «Ռիչարդ Օլդինգտոն՝ անձնական դիմանկար» հոդվածաշարում ներկայացնում է նախկինում գրաքննության «թեթև ձեռքով» չհրատարակված էսսեներ: Նա Օլդինգտոնին բնութագրում է որպես անհատի, բազմակողմանիորեն զարգացած, հարուստ կենսաճանաչողությամբ օժտված գրողի: Իսկ Զ. Դոյլը սահմանափակվում է կենսագրության ընդհանուր գծերի ներկայացմամբ: - Անգլիական գրականագիտությունը Օլդինգտոնին երբեմն անվանում է իմաժիստ պոետ: Հաճախ էլ գրողի անունը տեսնում ենք Ռեմարկի ու Հեմինգուեյի անունների կողքին, բայց ընդամենը հիշատակվող՝ որպես «կորուսյալ սերնդի» ներկայացուցիչ, նրա «Հերոսի մահը» վեպն էլ դիտվում է իբրև նշյալ գրողների վեպերի ընդհանրական շարունակություն կամ նույն թեման արծարծող եռագրության մաս՝ մնալով ստվերում: Անգլալեզու աշխատություններից հարկ է առանձնացնել Բ. Էվանսի, Է. Ֆորստերի, Հ. Ռութի, Ջ. Բիչի ուսումնասիրությունները[3], որոնք նպաստել են գրողի պատկերած ժամանակահատվածի պատմամշակութային, սոցիալ-քաղաքական, գրական-գեղարվեստական համատեքստն իրապես հասկանալուն: Անգլիական գրականագիտությունը մինչ օրս էլ զարմանալիորեն զուսպ է իր գնահատականներում և այդպես էլ փորձ չի անում գրողի ստեղծագործության ու հատկապես վեպերի լուրջ ու մանրազնին քննության, թեկուզ հենց «Հերոսի մահը» վեպի, որը կարճ բնորոշվում է իբրև գրողի ստեղծագործության բարձրակետ[4]: Պատճա՞ռը. *Օլդինգտոնի հանդեպ անտարբերությունը, հաճախ նաև անառողջ ու անհիմն քննադատությունը պայմանավորված էին գրողի կողմից անգլիական հասարակության խիստ քննադատությամբ, ինչպես նաև հայրենիքից անդառնալիորեն հեռանալու փաստով:* Այս ամենը հիմք դարձավ «Հերոսի մահը» հակաանգլիական վեպ, իսկ գրողին՝ անգլիական հասարակության անողոք քննադատ համարելու[5]:

Ռուս գրականագիտությունը Օլդինգտոնին համարում է իբրև մոդեռնիզմից հեռացած ու ռեալիստական ավանդույթները սեփականած, դրամատիրական կեղծ ու շինծու իրականության քննադատ և որպես «կորուսյալ սերնդի» գրող՝

---

[2] **Bergonzi B.**, The turn of a Century, London: Macmillan, 1973, p 143

[3] Տե՛ս **Evans B.**, English literature between the wars, London: Methuen & Co, 1948, **Forster E.**, The development of English novel between 1918-1939, Glasgow: Jackson, Son & Co, 1945, **Routh H.**, English literature and ideas in the 20th century, London: Methuen & Co, 1948, **Beach J.**, The Twentieth Century Novel, N. Y.: Appleton-Century, 1932

[4] Տե՛ս **Cyril F.**, War books, a critical guide, London: Peter Davies, 1930, p 27

[5] Տե՛ս **Ward A.**, Twentieth Century literature, London: Methuen, 1933, p 34

հիմնականում Հեմինգուեյի, Ռեմարկի վեպերի զուգակշիռների մեջ: Մ. Ուռնովի, Դ. Ժանտիևայի, Գ. Իոնկիսի, Ն. Միխալսկայայի, Օ. Նեմիրովսկայայի և այլոց ուսումնասիրությունները[6] ասվածի հավաստումն են:

Պետք է փաստել, սակայն, որ Օլդինգտոնի երկերի ուսումնասիրվածության պատկերը ցայսօր ավարտուն չէ. հիմնականում վեպերի նկարագրություն է. մանրամասն ուշադրություն չեն դարձվել հոգեբանական վերլուծության, հերոսների ընդհանուր, ներքին կապի, հերոս-ժամանակաշրջան աղերսների, մարդու և նրա հոգեբանական խնդիրների աղավաղման վրա: Եվ ահա այդ ամենի հանգամանալից ուսումնասիրությունն ամբողջական մի աշխատանքի շրջանակում ևս պայմանավորում է ատենախոսության ***գիտական նորույթը***:

ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքի ***գործնական նշանակությունն*** այն է, որ այն կարող է ծառայել որպես ուսումնաօժանդակ նյութ ՀՀ տարբեր բուհերի ուսանողներին և դասախոսներին, օգտակար լինել առհասարակ ժամանակակից անգլիական գրականության մասնագետների համար:

ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

Աշխատանքը քննարկել ու հրապարակային պաշտպանության է երաշխավորել ԵՊՀ-ի եվրեպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի արտասահմանյան գրականության ամբիոնը: Ատենախոսության հիմնադրույթները հրապարակվել են ՀՀ ԲՈԿ-ի կանոնադրությամբ հաստատված գիտական պարբերականներում:

ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, համապատասխան տրոհումներ պարունակող երեք գլուխներից, եզրակացություններից և գրականության ցանկից:

---

[6] Տե՛ս **Урнов М. В.**, На рубеже веков, Очерки английской литературы, Москва: Наука, 1970, **Жантиева Д.**, Английский роман 20 века 1918-1939, Москва: Наука, 1965, **Ионкисс Г.**, Интелектуальний герой Р. Олдингтона, Уч. зап. МГПИ, Москва: 1964, № 218, **Ионкисс Г.**, Олдингтон и английская романтическая традиция // Лит. процесс и творческая индивидуальность, Кишинев, 1990, **Михальская Н.**, Антивоенный роман Р. Олдингтона и английская литература 20-х годов // Уч. зап. МГПИ, Москва: 1963, № 203, **Михальская Н.**, Пути развития английского романа 20-30-х годов, Москва: Высш. шк. 1966, **Немировская О.**, Ричард Олдингтон, Сущий рай // Интер. лит., 1938, № 1, с. 239-240.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այստեղ հիմնավորվում են թեմայի ընտրությունը, դրա արդիականությունն ու գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, մատնանշվում են ուսումնասիրության նպատակներն ու խնդիրները, բացահայտվում աշխատանքի մեթոդաբանական բազան, հարցի պատմությունը և թեմային առնչվող գրականությունը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԵՋ

Այս գլխում մանրամասն քննարկվում են երկու հիմնախնդիրներ՝ *պատերազմի օլդինգտոնյան ըմբռնումները* և *պատերազմի գեղարվեստականացումը «Հերոսի մահը» վեպում*:

Նկատվում է, որ պատերազմը հեղաշրջում է Օլդինգտոնի կյանքը, խորապես նաև ստեղծագործությունը ոչ միայն թեմայի, այլև ժանրի իմաստով: Մինչև 1918 թ. նա ստեղծագործում է որպես խրամատային բանաստեղծ՝ հիմք դնելով, այսպես կոչված, «խրամատային պոեզիային» և փորձելով պոեզիայում պատկերել պատերազմն ու դրա հետևանքները: Նրա պոեզիայի, ապա արձակի, մասնավորապես վեպերի հիմնական թեման հետպատերազմյան շրջանում հիասթափության, ապրած ցավի և անդառնալի ապրումների պատկերումն է: **Համատարած ոչնչացման ճիրաններում պայքարել ու պահպանել կյանքի հանդեպ հավատը. այս է Օլդինգտոնի ստեղծագործության հիմնական թեմա-գաղափարը:**

«Հերոսի մահը», «Գնդապետի աղջիկը» և «Բոլոր մարդիկ թշնամիներ են» վեպերը թեմատիկ առումով համարվում են միմյանց շարունակություն: Այդպիսի կարծիքի տեղիք է տալիս «Բոլոր մարդիկ թշնամիներ են» վեպի առաջաբանում հեղինակի արտահայտած հետևյալ միտքը. ««Հերոսի մահը» իմ ժամանակի մարդու պատմությունն է, որն սպանվել է եվրոպական պատերազմում, «Գնդապետի աղջիկը» նույն սերնդին պատկանող աղջկա պատմությունն է, որը ևս յուրովի տուժել է, «Բոլոր մարդիկ թշնամիներ են» վեպը պատերազմից փրկված մարդու պատմությունն է, և թե ինչպես նա վարվեց իր կյանքի հետ հետո»[7]: Այո՛, գաղափարական մոտեցումների ընդհանրությունն առկա է բոլոր վեպերում. պատերազմի համապատկերում կարմիր թելի պես անցնում են սերունդների դրաման, բախումը, սիրո և սեռի խնդիրը, որոնք հանդիպադրվում են պատերազմական ժամանակներին ու խաղաղ ժամանակներից տարբեր լուծում գտնում:

Առաջին աշխարհամարտի գեղարվեստական արտացոլումը պոետիկայի, խնդրականության իմաստով տարբեր երկրների գրականության մեջ ուրվագծում է

[7] **Aldington R.**, All men are enemies, Rome, The Albatross MDCCCCL, 1950, Author's Note XXi

տիպաբանական ընդհանրություններ. պատերազմի բանաձևումը տարբեր գրողներ ներկայացնում են յուրովի, այն է՝ պատերազմի հեղափոխականացման ընթացքից մինչև վիատություն, հուսալքում, վատատեսություն: Օլդինգտոնը պատերազմը դիտարկում է որպես մարդկային ու պետական հարաբերությունների, ռեգիոնալ շահերի բախման թատերաբեմ, և, որ ամենակարևորն է, նրան հետաքրքրում են մարդը, նրա ապրումները, հոգեվիճակը: Պատերազմը գրողի համար մարդու վերափոխման ընթացքը պատկերելու միջոց է: Օլդինգտոնի գրական հերոսը դառնում է մտավորականը՝ նկարիչ Ջորջ Ուինթերբորնը: Նա ապրում է բոլոր վեպերում, առկա է բոլոր գլխավոր հերոսների մեջ: Ի տարբերություն «Հերոսի մահի»՝ Բարբյուսի «Կրակ»-ում (վեպի հերոսը զինվորների խումբն է՝ ընդդեմ իմպերիալիստական պատերազմի), Ռեմարկի «Արևմտյան ռազմաճակատում անփոփոխ» երկում պատերազմի դաշտում չկան մտավորականներ: Հեմինգուեյը չի պատկերում իր հերոսների նախապատերազմյան կյանքը, նրանցից («կորուսյալ սերնդի») ոչ մեկը չունի նախապատերազմյան շրջանի կենսագրություն: Միտումը թերևս պատերազմից ստացած ցնցումների, ողբերգության սրացման պատկերումն է: Չկան ժամանակային խաչասերումներ, չկան անցյալից հերոսներ, ինչպես Օլդինգտոնի պարագայում:

Պատերազմի դաշտում մտավորականին ներկայացնելով՝ պատումը վարողն ավելի է սրում իրադարձությունների հոգեբանական կողմը. նա պատկերում է անհատի բարդ ներաշխարհի աստիճանական ընթացքը, որը հանգեցնում է միայնության դրամայի՝ նախ որպես մարդախույս անհատի, ապա մտավորականի՝ զրկված արվեստի աշխարհից: Ռազմաճակատում հայտնված Ջորջն աստիճանաբար համոզվում է պատերազմի անիմաստության մեջ. պատերազմը հրեշավոր երևույթ էր, որն անխնա բնաջնջում էր ամեն ինչ: Ռազմաճակատում մտավորականը տեղ չունի, և առհասարակ զրոյացված է անհատը: Ուինթերբորնի դեպքում էլ բացառություն չի լինում. նա հայտնվում է նույն իրավիճակում. անկարող է և նույնիսկ ցանկություն էլ չունի ընդունել պարտադրվող առօրյան, ընտելանալ կեղծիքին ու սպանությանը: Օլդինգտոնը ներկայացնում է ոչ այնքան պատերազմական գործողությունը, որքան գաղափարաբանությունը: Պատումը վարողի միտումը ոչ թե գործողությունների, այլ պատերազմի բովում հայտնված սերնդի ձևավորման, նրա հոգեկան ապրումների, մտորումների հետ հաղորդակցման նկարագրությունն է:

Հերոսին համակում է հոգևոր ու ֆիզիկական ես-ի կորստի մտավախությունը: Ջորջի համար ամենասարսափելին մտքի, կենտրոնացման կորուստն էր. միտքը թռչում էր, նա ոչնչի վրա չէր կարողանում կենտրոնանալ, արդեն դժվար էր ընթերցելը կամ մի բանի մասին համակարգված մտածելը: Նա աստիճանաբար կորցնում է իրեն, և գիտակցումը վրա է հասնում երրորդ ծանր հարվածով՝ իրենից իր արվեստի օտարումով կամ հակառակը: Իրեն արդեն օտար էին իր հին կտավները: Նա այրում է դրանք՝ առանց խղճի խայթի կամ ցավի՝ միաժամանակ զգալով, որ ունակ չէ այլևս նորերը նկարելու. միակ բանը, ինչն իր միտքը համակել է, պատերազմն է: Այն չափից ավելի է սպառել իրեն, որ կարողանա ներսում

եղածն ու վրձինը համակցել: Իրենից ասես խլել են իր աշխարհը կամ, որ ավելի ցավալի է, այն գուցե երբեք էլ իրենը չի եղել: Կտավների՝ առանց ցավի այրումն ըստ էության ունի սիմվոլիկ բնույթ. հերոսն այս միջոցով այրում է իր անցյալը: Գրականագետները նշում են այս դրվագը՝ անտեսելով, սակայն, մի կարևոր դետալ՝ Ջորջը նախևառաջ այրում է ինքնանկարը, իր միակ նկարը, որն անհիշելի ժամանակ առաջ էր նկարել: Ինքն այրում է կտավի՝ իր կենդանությունը, այրում նախկին Ջորջից ամեն ինչ:

Ինչ վերաբերում է «Հերոսի մահ»-ում պատերազմի գեղարվեստականացմանը, նկատելի է, որ Օլդինգտոնն իր վեպի համար նախընտրել է «վեպ-ջազ» ձևաչափը, որը թույլ էր տալիս լավագույնս արտացոլելու դարի տրամադրությունն ու պրոբլեմատիկան: Նախաբանում հեղինակը գրում է, որ ինքը «Հերոսի մահը» վեպ չի համարում, որտեղ պահպանվում են ժանրին հատուկ կառուցվածքային տարրերը: Պատումի ձև, իմպրովիզացիա, ռիթմի արագ փոփոխություն, տեմպի ընդհատում, հակադրությունների համատեղում՝ պաթոս, հեգնանք, թախիծ, ծաղր. այս ամենը խախտում է կառուցվածքի ներդաշնակությունը: Վեպի յուրաքանչյուր գլխի համար ընտրված են երաժշտական անվանումներ, որոնք երաժշտական տեմպի հերթագայություն են, և դրանց նման վերափոխվում է իրադարձությունների տեմպը՝ դանդաղ, չափավոր, արագ: Ըստ հեղինակի՝ «Հերոսի մահը» «բնույթով ողբ է, թույլ փորձ՝ այն սերնդի հուշարձանը ստեղծելու, որն ուներ բազում հույսեր, ազնվորեն պայքարում ու խորապես տառապում էր»[8]:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ՊԱՏԵՐԱԶՄ ԵՎ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսության երկրորդ գլուխը տրոհված է երեք ենթագլուխների, որոնցից առաջինը քննում է Օլդինգտոնի վեպերում *սեր-էրոսի և կին-փղամարդ փոխհարաբերության խնդիրները*, երկրորդում բացահայտվում են *ինքնասպանություն-մահ երկփեղկության օլդինգտոնյան ընկալումները*, իսկ երրորդում ուսումնասիրվում է *կնոջ կերպարը պատերազմական և հետպատերազմական ժամանակահատվածում*:

Հիմնականում շեշտադրվում է, որ պատերազմի սարսափի բովում անհատը բախվում է ֆիզիկական ու հոգևոր չգոյության վտանգների՝ ինքնասպանության, խելագարության, ես-ի կորստի հետ: Հետպատերազմյան շրջանում մարդը դեմ հանդիման կանգնում է կյանքի անիմաստության, համակերպման անհնարինության, կյանքի շարունակման շարժառիթի բացակայության խնդիրների առջև, և առաջանում է վերասոցիալիզացվելու պահանջ:

Օլդինգտոնի՝ պատերազմի թեման ընդգրկող վեպերից յուրաքանչյուրում սեր-էրոսն արտահայտվում է յուրակերպ: Վերոնշյալ խնդրի քննությանն անդրա-

[8] **Aldington R.**, Death of a hero, London: Penguin classics, 2013, p 1

դարձ է կատարվել «Հերոսի մահը» վեպի, մասնավորապես Ջորջ-Էլիզաբեթ զույգի օրինակով: Այն դառնում է միջոց՝ պատկերելու 1910-ականների անգլիական հասարակության մեջ արմատավորված սեռական, հոգեբանական խնդիրները: Գրողը պատկերում է կին-տղամարդ փոխհարաբերությունն իր պրոբլեմների շրջանակով, ապա այդ փոխհարաբերության զարգացման ընթացքը պատերազմի ժամանակ ու դրանից հետո: Պատումը վարողը շեշտադրում է պատերազմի հետևանքով այդ հարաբերությունների, սերնդի մտածողության փոփոխությունը: Նա քանիցս մատնանշում է Ջորջի և Էլիզաբեթի սերնդին հատուկ սեռականության պրոբլեմը, տվյալ սերնդի երիտասարդության դժգոհությունը՝ բարոյական հին սկզբունքներից և անհատական մղումները ոչ թե վերափոխելու, այլ հիմնովին վերացնելու դրանք ու ստեղծելու սիրո ազատության, բարոյականության վերաբերյալ նոր ընկալումներ: Այստեղից էլ առաջանում է «սեքսուալ հեղափոխություն» կատարելու պահանջ-ծրագիրը՝ ընդդեմ վիկտորիանական դարաշրջանի:

Ակնհայտ է, որ հերոսների՝ սեքսուալ հեղափոխություն կատարելու ծրագիրն ուղղակիորեն մերժում էր հասարակության կողմից առաջադրվող տաբուների ամբողջ համակարգը, որն ուներ նաև կրոնական ու իրավական հիմք: Անցյալ ժամանակների ճակատագրական ընտրությունը՝ «Այրվի՛ր կրքից կամ ամուսնացի՛ր»[9], արդեն սպառել էր իրեն պատերազմական սերնդի ժամանակում. այժմ թե՛ կինը և թե՛ տղամարդը կարող են ապրել լիարժեք կյանքով՝ չամուսնանալով և երեխա չունենալով, բայց այս ազատությունն էլ առաջ է բերում մեկ այլ խնդիր, այն է՝ յուրաքանչյուրը կարող էր իրեն համապատասխան սիրեկան կամ սիրուհի ընտրել: Ուրիշ խոսքով՝ սա համաբնակեցման նոր ձևաչափ է, որն առավել նախընտրելի է, քան «խաբեությունը, ընտանեկան բռնությունն ու անբարոյականությունը»[10], որոնք, ըստ պատումը վարողի, կազմում էին ժամանակի առաջ ծառացած խնդիրների շարան:

Արձակագիրը ժամանակային անցումներով ներկայացնում է նաև կին-տղամարդ հարաբերության մոդելը, միաժամանակ պատկերում ընկալումների փոփոխման ընթացքը: Ասվածի օրինակը Թոնի-Մարգրետ հարաբերությունն է, որն ընդհանուր պատկերով հիշեցնում է Ջորջ-Էլիզաբեթինը: Կին-տղամարդ փոխհարաբերության մոդելում ուրվագծվում են հարաբերության բազմապիսի տեսակներ, որոնցից առանձնանում է թվացյալ սիրո բանաձևը, երբ կինը դառնում է միջոց:

Ուշարժան է, որ կին-տղամարդ փոխհարաբերության մոդելն անպայմանորեն ներառում է ամուսին-կին-սիրուհի եռանկյունին, ինչն էլ վկայում է հերոսների հոգեբանական խզումների, ներքին չհասկացվածության, միմյանց կողմից չհասկացվածության, սեռական պրոբլեմի հաղթահարման անկարողության մասին, որոնք պատերազմի ընթացքում ու հետպատերազմյան շրջանում է՛լ ավելի են սրվում. առաջանում է պրոբլեմների մի նոր շարան՝ տղամարդը և կինը միմյանց

[9] Տե՛ս նույն տեղը, էջ 144:
[10] Տե՛ս նույն տեղը, էջ 146:

համար վերածվում են միջոց-սուբյեկտի՝ առաջադրելով հարաբերման նոր ձևաչափեր և հետ մղելով ամուսնական ինստիտուտը, սերը, որը միայն մի դեպքում է (Թոնի-Քեթրին) դառնում փրկօղակ:

Թե՛ անգլիացի և թե՛ ռուս գրականագետները, որոնք այս կամ այն չափով անդրադարձել են «Հերոսի մահ»-ի քննությանը, գրեթե միշտ իրենց խոսքը եզրափակում են հերոսի՝ ինքնասպան լինելու իրողության հիշատակմամբ, վեպի քննության հիմնական ուղղությունը կենտրոնացնում են այդ կետի վրա՝ հուզական որոշակի շեշտեր դնելով կամ թե այդ դրվագով վեպի ավարտն ու պատումը վարողի գաղափարաբանությունը, ասելիքն ամբողջացնելով, կողմնորոշելով: Այսինքն՝ նրանց նշած հերոսի ինքնասպանությունը մնում է տպավորության կամ ենթադրության սահմանում, հատկապես, երբ անտեսվում է վիպասանի՝ հենց վեպում առկա երկմտանքը կամ խոսքը:

Հոգու մահացումը հերոսին ըստ էության կանգնեցնում է ես-ի, ինքնության կորստի առջև: Սա ֆիզիկական կորուստ չէ. ավելի զորեղ է: Պատերազմի անիմաստությունը միաժամանակ դառնում է միջոց՝ զգալու սեփական գոյի ու առհասարակ կյանքի անիմաստությունը, դրդելու ինքնասպանության: «Կորուսյալ սերնդի» ողբերգականությունը ոչ միայն «պատերազմ» երևույթն զգալու, ապրելու, այլև իրենց աշխարհի, մարդկության մասնիկը չզգալու մեջ է. կյանքն ու նոր աշխարհը, ուր նրանք ստիպված են վերադառնալ, շրջանցել են իրենց: Նոր իրականությունը մերժելի է իրենց համար, այդ իրականությունն էլ փոխադարձաբար մերժում է հերոսներին: Նրանք չեն կարողանում ներգրավվել նոր իրականության մեջ, որովհետև այն անտեղյակ է պատերազմից: Նրանք տեղ չունեն մի իրականության ներսում, որը չի ապրել պատերազմի սարսափը, հետևաբար չի կարող հասկանալ իրենց, իրենց ողբերգությունը:

Համադրելով ինքնասպանության վերաբերյալ փիլիսոփայական, սոցիոլոգիական տարաբնույթ տեսություններ՝ մտահանգում ենք, որ Օլդինգտոնի հերոսը պատերազմի հետևանքով ձեռք է բերել հոգեբանական լուրջ ու անհաղթահարելի պրոբլեմներ: Նա թեև ընկնում է ինքնասպանության մտորումների մեջ, այնուամենայնիվ, անձնասպան չի լինում: Օլդինգտոնը փորձում է հերոսի մահն ինքնասպանություն չորակել. նախընտրում է Ջորջի մահն աղերսել խելագարության, անգիտակցականորեն դեպի մահը կամ ուղղակի ինչ-որ անհայտի, անէացման ձգտմանը:

Օլդինգտոնի արձակում ուշագրավ է նաև պատերազմական և հետպատերազմական ժամանակահատվածի կնոջ կերպավորումը: Պատերազմի ընթացքում զինվորական ընկերությունը, կանայք դառնում են դիմակայման այն եզակի կռվանները, որոնք օգնում են զինվորին՝ ոգին տոկուն պահելու, ուժի, վերադարձի շարժառիթ ունենալու: Ջորջն «իր հետ պատերազմ է տանում Էլիզաբեթին ու Ֆաննիին»: Կանայք, հետո նաև ընկերները դառնում են այն կռվանը, որից կառչում է հերոսը պատերազմի դաշտում, որ դիմանա: Ջորջի կանայք հեռու են մնում համընդհանուր քաոսից և պահպանում են կենդանի ոգին: Նրանք, ցավոք, չեն կարողանում հասկանալ՝ ինչ անմարդկային հոգեվիճակում է ապրում Ջորջը,

և չեն նկատում այն անհաղթահարելի անդունդը, որն օրեցօր գոյանում ու ընդարձակվում էր իրենց սերնդի տղամարդկանց ու կանանց միջև:

Իրենց հերթին տառապում են նաև հերոսուհիները: Ամուսնության, ընտանիքի, երեխաների վերաբերյալ նրանց երազանքները բախվում են հետպատերազմյան կոշտ իրականությանը, որտեղ տղամարդկանց պակաս կա. ոմանք զոհ են դառնում արմատավորված բարքերին՝ չընդունելով «ազատ կնոջ» վարքագիծն ու կերպը, իսկ սա տվյալ ժամանակում միակ միջոցն էր տղամարդ ունենալու, այսինքն՝ առաջանում է սեռական պրոբլեմի անլուծելիություն, ինչը հանգեցնում է նաև սերնդաշարունակության կանխարգելման: Անհաջողությամբ են պսակվում նաև ֆլիրտի, տղամարդկանց հետ ազատ հարաբերման փորձերը:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ՄԱՐԴ-ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԵՎ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՀԱՐԱՑՈՒՅՑՈՒՄ

Երեք ենթագլուխներ ներառող այս գլխում հաջորդաբար քննվում են *սերունդների հակադրականության, անհատի ու աշխարհի համապատկերում օտարացման դրաման, «կորուսյալ» ու նոր սերունդների բախման և նոր հերոսի* խնդիրները: Այստեղ հիմնական շեշտադրումն այն է, որ հանրային-քաղաքական, մշակութային քաոսի մեջ նոր սերունդն առաջադրում է կորուսյալության հաղթահարման, նոր կյանքի, ապագայի վերափոխման, նոր հասարակության ու քաղաքակրթության ստեղծման ծրագիր:

Օլդինգտոնի՝ սերունդների հակադրականության խնդիրն արծարծված է «Հերոսի մահը», «Բոլոր մարդիկ թշնամիներ են», «Իրական դրախտ», ինչ-որ չափով նաև՝ «Գնդապետի աղջիկը», «Կանայք պետք է աշխատեն» վեպերում: Վերոնշյալ պրոբլեմն իր խնդիրներով, դրանց ծագման նախադրյալները, հարուցած բազմապիսի խնդիրներն ու ազդեցությունը սերունդների հարաբերակցության, կենսագործունեության և ճակատագրի վրա, հաղթահարման բանաձևերն ունեն ուրույն մեկնություններ: Հիշյալ վեպերում ներկայացվում է մտածողությամբ իրարից տարբեր երկու սերունդ:

Վիկտորիանական դարաշրջանի ավարտից շուրջ տասնամյակ ու ավելի էր անցել, բայց Օլդինգտոնի վեպերում ներկայացվող ավագ սերնունդը շարունակում էր հին ավանդույթն ու փորձում այն պարտադրաբար տարածել հաջորդող սերնդի վրա: Իսկ հաջորդողն ընդդիմանում էր, փորձում ազատվել պարտադրանքից, առաջնորդվել նոր մտածողությամբ: Ջորջ Ուինթերբորնը («Հերոսի մահը»), Հենրի Քլարենդոնը («Բոլոր մարդիկ թշնամիներ են»), Հեյլինը («Իրական դրախտ») ծնվել ու մեծացել են անգլիական ընտանիքներում, որոնց նկարագիրն ամբողջանում է մի շարք ընդհանրություններով՝ մտածողություն, կեցություն, վարք, դավանանք ու նպատակներ: Սա բացասման բացասման հավերժական դրսևորումն է՝ օլդինգտոնյան ուրույն բանաձևումներով: Վերոնշյալ երեք վեպերի

հերոսներն առայժմ իրենց ուրույն արժեհամակարգի կրողը չեն. ապրում են այն միջավայրում ու այն արժեքներով, որոնք իրենց ծնողներն են ձևավորել, և փորձում են նույն ձևով կառուցել որդիների կյանքը: Սա ամենևին չի նշանակում, որ այս սերունդը գոհունակ է իրեն մատուցվող կենսակերպից. պարզապես չունի խոր գիտակցում, ինչ-որ տեղ էլ խիզախություն՝ ընդվզելու, հինը վերափոխելու:

Որդիները՝ Ջորջ Ուինթերբորնը, Էնտոնի Քլարենդոնն ու Քրիս Հեյլինը, գաղափարաբանորեն լիովին տարբեր են հայրերից: Նրանց սերունդը դնում է ընդվզման ու վիկտորիանական դարաշրջանից փոխանցված ավանդույթից հրաժարման սկիզբը: Ինքնըստինքյան առաջ է գալիս երկու մշակույթների անհամատեղելիությունը. որդիները չեն կարողանում սեփականել այն մշակույթը, որն իրենց հրամցնում են հայրերը, բայց որը լիովին խորթ է ու տարբեր իրենց դավանածից: Նույնն էր նաև ծնողների, հայրերի պարագայում, որոնք առանձնապես լուրջ չէին վերաբերվում. անտեսում էին երեխաների նախասիրություններն ու մասնագիտական հետաքրքրությունները: Հայրերի կողմից երեխաների հոգեաշխարհի անտեսումն ըստ էության սկիզբ է դնում մի նոր պրոբլեմի՝ չհասկացվածության, որ օլդինգտոնյան հերոսների անբաժանելի մասնիկն է ու հետագայում դառնում է առավել ընդգրկուն:

Օլդինգտոնի վիպագրության մեջ բարոյական և սոցիալական ասպեկտները ներհյուսված են, գրեթե անզատելի: Պատերազմն ինքնին անբարո երևույթ է: Հերոսները թե՛ պատերազմական և թե՛ հետպատերազմական վիճակներում անվերջ հայտնվում են բարոյականի ու սոցիալականի քաոսային բախումներում: Գրողը բարոյական ու սոցիալական ասպեկտները լավագույնս բացահայտում է կերպարների հոգեբանական փոփոխությունների միջոցով: Նա կերպարին ներկայացնում է նախապատերազմյան շրջանում, պատերազմի ընթացքում և հատկապես պատերազմից հետո, երբ մարդու մեջ ի հայտ է գալիս հետպատերազմյան հոգեբանական խեղման սինդրոմը, որը հանգեցնում է հասարակությունից օտարման, ես-ի քայքայման, անձնական անհաղթահարելի դրամայի: Օլդինգտոնի՝ ռազմաճակատից վերադարձած բոլոր հերոսների մեջ նկատելի է այդ ցավալի համախտանիշը:

«Բոլոր մարդիկ թշնամիներ են» վեպում անցյալի կորստի ցավն այնքան սուր չէ, որքան «Հերոսի մահ»-ում: Բնական է՝ Օլդինգտոնը Թոնիին հնարավորություն է տալիս տարիներ կանգ առած կյանքը նորից սկսելու՝ միաժամանակ անցյալից կոլորիտ, մարդիկ բերելով:

Իր վերջին՝ «Մերժված հյուրը» վեպում Օլդինգտոնը փորձում է նախորդ վեպերում եղած վատատեսությանը հակադրել սիրով և գեղեցկությամբ մարմնավորված դրական գաղափարը: Այդ գաղափարը հերոսին հեռացնում է պայքարի ասպարեզից ու սոցիալական բախումներից իր սեփական՝ դժվարությամբ ձեռքբերված երջանկության մեկուսի աշխարհ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

• Թեև Օլդինգտոն գրողի հայացքներում առկա է ընդհանուր քաոսայնություն, այնուամենայնիվ նրա յուրաքանչյուր երկ որոշակի նպատակ է հետապնդում:

• «Հերոսի մահ»-ում Օլդինգտոնն ընտրում է հերոսի՝ այսօրվա ըմբռնումով ոչ թե մահվան դրվագը, որն ինքնին ողբերգական է, այլ հերոսի վերացական մահը, որն ունի ավելի ընդհանրական նշանակություն. հերոսն ապրի ֆիզիկապես թե մեռնի, նա ըստ էության նույն մեռածն է, ինչ հոգեբանորեն մեռած մարդը: Չնայած անգլիական ու ռուսական գրականագիտությունը Օլդինգտոնի հերոսի՝ Ջորջ Ուինթերբորնի մահը վերագրում էր ինքնասպանության՝ դրանով շեղելով նաև վեպի ընկալման հունը, այնուամենայնիվ ինքնասպանության մոտիվի քննությունը փաստում է, որ հերոսը գաղափարաբանությամբ կրում է ինքնասպանությանը բնորոշ հոգեվիճակ, ապրումներ, բայց չկա արարքը, չկա այդ արարքը գործելու հոգեվիճակը. նա ուղղակի բռնում է անէացման ուղին, ոչ ինքնասպանության, որոնք այս դեպքում քիչ տարբերությամբ չեն աղերսվում:

• Սերունդների հարաբերակցության պրոբլեմն Օլդինգտոնի վեպերում ներկայացվում է մասնավորապես հին սերնդի արժեհամակարգի, ինչպես նաև հայրերի կողմից որդիների չհասկացվածության, կրթության ու արվեստի վերաբերյալ պատկերացումների տարբերության տեսանկյունից: Դրանք նոր սերունդը մերժում է՝ առաջադրելով կյանքի նոր ու ուրույն ձևաչափ: Օլդինգտոնյան մոդելով՝ այս ձևաչափը հանգեցնում է հայրեր-որդիներ պրոբլեմի անհաղթահարելիության:

• Օլդինգտոնի վեպերում ներկայացվող նախապատերազմյան սերունդը 1910-ականներին կանգնում է անգլիական հասարակության մեջ արմատավորված սեռական, հոգեբանական մի շարք խնդիրների առաջ: Այդ սերունդն ընտրում է «սեքսուալ հեղափոխություն» կատարելու պահանջ-ծրագիրը՝ վիկտորիանական հասարակությունից եկող բարոյական հին սկզբունքները վերացնելու և բարոյականության, սիրո ազատության նորանոր ընկալումներ ստեղծելու նպատակով: Օլդինգտոնի հերոսների որդեգրած «Սեռերի միջև կատարյալ փոխհարաբերությունների գլխավոր ծրագիրը» ըստ էության չի ամբողջանում, այսինքն՝ հերոսներն այսկերպ խորշում են հարաբերությունների պատասխանատվությունից, մշտական կապվածությունից՝ տուրք տալով ժամանակավոր վայելքին, ինչն էլ կանխորոշում է նոր հարաբերությունների ընթացք:

• Օլդինգտոնի վեպերում կին-տղամարդ փոխհարաբերության մոդելը ներկայացվում է ժամանակային երեք շրջափուլով՝ նախապատերազմյան, պատերազմի և հետպատերազմյան, որոնք ուրվագծում են այդ հարաբերության բազմապիսի տեսակներ՝ թվացյալ սիրո, մարմնական մերձեցման, սիրո նվաճման, օտարացման: Կին-տղամարդ փոխհարաբերությունը վեպերում ներկայանում է ամուսին-կին-սիրուհի եռանկյունով, ինչն էլ վկայում է հերոսների հոգեբանական խզումների, ներքին չհասկացվածության, սեռական պրոբլեմի հաղթահարման անկարողության մասին, որոնք էլ իրենց հերթին առաջացնում են խնդիրների մի նոր շարան՝ տղամարդը և կինը միմյանց համար վերածվում են միջոց-սուբյեկտի՝ առաջադրելով հարաբերման նոր ձևաչափեր՝ հետ մղելով ամուսնական ինս-

տիտուտը, սերը, որը միայն մի՝ «Բոլոր մարդիկ թշնամիներ են» վեպի հերոսների դեպքում է դառնում փրկօղակ:

• Սեփական երկրի հանդեպ ատելությունն ու մերժումը դառնում են Օլդինգտոնի հերոսների՝ Ուինթերբորնի, Քլարենդոնի՝ պատերազմական սերնդի ապրելակերպի անբաժանելի մասը: Այս քննադատական մոտեցումներն ըստ էության պայմանավորված են պատերազմի անիմաստության գիտակցմամբ:

• Ռազմաճակատից վերադարձած մարդը հետպատերազմյան ժամանակահատվածում կանգնում է սոցիալիզացվելու խնդրի առաջ: Օլդինգտոնի հերոսների՝ մարդկանցից խուսափումը, օտարման ձգտումն ըստ էության պայմանավորված էր հավատի կորստով:

• Օլդինգտոնն առաջադրում է պատերազմից հետո իրականություն փոխադրելու փրկչական ծրագիր, որը, սակայն, «Բոլոր մարդիկ թշնամիներ են» վեպում է մասամբ իրագործվում:

• Օլդինգտոնի ներկայացրած հետպատերազմյան կնոջ անհատական դրաման ամբողջանում է միայնության, իր երկրորդ ես-ին՝ տղամարդ չգտնելու, նրա կողմից անտեսված լինելու, դեպի հակասեռը ձգտելու վախի, հասարակության ու շինծու բարոյականության գերի լինելու զգացումներով: Օլդինգտոնը միտում ունի ցույց տալու՝ ինչպես հետպատերազմյան ժամանակահատվածում կանայք առանց սեփական կամքի ու ընտրության դառնում են հետպատերազմյան «անեծքի» կրողը:

• Օլդինգտոնի «Իրական դրախտ» վեպի հերոսները նոր պատերազմի սպառնալիքի միջև հայտնված մարդիկ են: Այս նոր սերունդը, լինելով նախորդի շարունակությունը, կանգնում է նույն՝ լինել-չլինելու երկվության առաջ. մոտալուտ պատերազմի սարսափը հետևում է: Հերոսներն առաջադրում են պատերազմը կանխելու, նոր կյանքի ստեղծման, մարդկության զարգացման ընթացը վերափոխելու, նոր քաղաքակրթության ստեղծման, «կորուսյալությունից» ազատագրման ծրագիր: «Կորուսյալ սերնդին» հատուկ պրոբլեմների հաղթահարման իմաստով Օլդինգտոնի հետպատերազմյան հերոսների ծրագիրը դատապարտվում է չիրագործման.

• «Կորուսյալ սերնդի» ողբերգությունը ոչ միայն *պատերազմ* երևույթն զգալու, ապրելու, այլև իրենց աշխարհի, մարդկության մաս չզգալու մեջ է. կյանքն ու նոր աշխարհը, ուր նրանք ստիպված են վերադառնալ, շրջանցել են իրենց: Նոր իրականությունը մերժելի է հերոսների համար, այդ իրականությունն էլ փոխադարձաբար մերժում է իրենց: Հետպատերազմյան սերունդը դատապարտված է դառը ճակատագիրը կրելուն:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԵՆ ՀԵՂԻՆԱԿԻ ՀԵՏԵՎՅԱԼ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐՈՒՄ

1. Սեր-էրոսի և սերնդաշարունակության պրոբլեմն Օլդինգտոնի «Հերոսի մահը» վեպում //ԵՊՀ ՈՒԳԸ հոդվածների ժողովածու, 1.3 (13), Երևան, ԵՊՀ հրատ. , 2016 , (1) 35, էջ 74- 78:
2. Պատերազմի ծագման պատճառները Օլդինգտոնի Հերոսի մահը վեպի օրինակով //Հանդես (Գիտամեթոդական հոդվածների ժողովածու), Երևան, «Վան Արյան» հրատ. , 2016 , (2) 84 , էջ 195-202:
3. Մահվան ու ինքնասպանության թեման Օլդինգտոնի «Հերոսի մահը» վեպում // Մեսրոպ Մաշտոց համալսարանի լրատու, Երևան, «Լիմուշ» հրատ. , 2016 , (4) 84, էջ 374-386:
4. Հայրեր- Որդիներ պրոբլեմը Ռիչարդ Օլդինգտոնի վեպերում //Հանդես (Գիտամեթոդական հոդվածների ժողովածու), Երևան, «Ճարտարագետ» հրատ. , 2016 , (3) 04 , էջ 250-257:
5. Անհատի օտարացման խնդիրը Օլդինգտոնի «Բոլոր մարդիկ թշնամիներ են» վեպում // Բանբեր Երևանի Վ . Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի, Երևան, «Լուսաբաց» հրատ. , 2018 , (3) 58, էջ 275- 285:
6. «Կորուսյալ սերնդի» ու նոր սերնդի բախումը. նոր հերոսի պրոբլեմը Օլդինգտոնի «Մերժված հյուրը» և «Իրական դրախտ» վեպերում // Օտար լեզուները բարձրագույն դպրոցում (Գիտական հանդես), Երևան, ԵՊՀ հրատ. 2018, (2) 39, էջ 215-224:

Сирунян Мариам Арамовна

Война и романы Олдингтона: моральный и социальный аспекты

Защита диссертации на соискание ученой степени кандидата филологических наук состоится 03.05. 2022 года в 14:30 на заседании специализированного совета 066 ВАК («Зарубежная литература»), действиющего в Ереванском государственном университете, по адресу г. Ереван, ул. А. Манукяна 1 (7-й корпус ЕГУ, факультет европейских языков и коммуникации, аудитория 422).

РЕЗЮМЕ

Диссертация посвящена исследованию творчества английского поэта, прозаика и критика **Ричарда Олдингтона** (1892-1962), в особенности – исследованию моральных и социальных аспектов романов с военной тематикой.

Работа состоит из введения, трех глав, выводов и списка литературы.

Во **введении** обосновываются выбор темы, ее актуальность и научная новизна, теоретическое и практическое значение, указываются цели и задачи исследования, раскрывается методологическая база работы, история вопроса и литература по теме.

В первой главе («Понимание войны в процессе развития») подробно обсуждаются две проблемы: олдингтонское понимание войны и художественность войны в романе «Смерть героя». Основной темой романов Олдингтона является картина разочарования, пережитой боли и необратимых переживаний в послевоенный период. Художественное отражение Первой мировой войны в поэтике, в плане проблематики в литературе разных стран очерчивает типологические общности: формулировку войны разные писатели представляют по-своему: от хода революции войны до отчаяния, надежности, пессимизма.

Олдингтон рассматривает войну как арену человеческих и государственных отношений, столкновения региональных интересов, и, что самое главное, его интересуют человек, его переживания, душевное состояние. Война для писателя-это способ изобразить процесс трансформации человека.

Художественный образ Первой мировой войны, созданный Олдингтоном, по сути, глубже, чем обычно представляется. Он раскрывает истинные причины возникновения войны

Во второй главе («Война и мораль») представлены три подглавы, в первой из которых рассматриваются проблемы взаимоотношений между любовью-эросом и женщиной-мужчиной в романах Олдингтона, во второй раскры-

ваются понимание Олдингтоном проблемы самоубийство – смерть, а в третьей исследуется образ женщины в военный и послевоенный период.

Акцентируется внимание на то, что в ужасе войны личность сталкивается с опасностью физической и духовной смерти: самоубийство, сумасшествие, потеря собственного я.

В послевоенный период человек сталкивается с проблемами бессмысленности жизни, невозможности смирения, отсутствия мотивации к продолжению жизни, и возникает необходимость переосоциализации.

В третьей главе («Проблема человек-общество в период войны и послевоенный период») последовательно рассматриваются драма противопоставления поколений, отчуждения на фоне личности и мира, проблемы «потерянного поколения» и столкновения новых поколений и нового героя.

Основной акцент здесь сделан на том, что в общественно-политическом, культурном хаосе новое поколение выдвигает программу преодоления потерянности, восстановления новой жизни, будущего, создания нового общества и цивилизации. Проблема противопоставления поколений Олдингтоном затрагивается в романах «Смерть героя», «Все люди-враги», «Настоящий рай», в какой-то мере также в романах «Дочь полковника», «Женщины должны работать». Вышеуказанная проблема имеет своеобразные интерпретации с предпосылками ее возникновения, возникшими многочисленными проблемами и влиянием на соотношение поколений, жизнедеятельность и судьбу, формулы преодоления. В упомянутых романах представлены два поколения, разные по мышлению.

В Выводах диссертации обобщается проведенное исследование и по пунктам выделяются его результаты и наблюдения. В конце диссертации представлен полный список использованных источников и литературы.

SIRUNYAN MARIAM ARAM

THE WAR AND ALDINGTON'S NOVELS: MORAL AND SOCIAL ASPECTS

The defense of the thesis will take place on 03.05.2022 at 14:30 at the HQC of RA's specialized council 066 of "Foreign Literature" in Yerevan State University (address: Yerevan, Aleq Manukyan st. 1, YSU, 7th building, Faculty of European Languages and Communication, room 422)

SUMMARY

The dissertation is dedicated to the 20th century English poet, novelist and literary critic **Richard Aldington** (1892-1962), the examination of his creative art, revealing the moral and social aspects of his war-themed novels.

The dissertation consists of an introduction, three chapters, conclusions and bibliography.

In the **introduction** the choice of the theme, its modernity and scientific novelty, theoretical and practical significance, the research objectives and problems are indicated, the methodological basis of the work, the literature related to the theme are revealed.

Two issues are discussed in detail in the **first chapter** "Perception of war in the process of development")- the Aldington conceptions of war and the art of war in the novel "Death of a hero". The main theme of Aldington's novels is the depiction of disappointment, pain and irreversible feelings experienced in the post-war period. The artistic reflection of the First World War in the literature of different countries in the sense of poetics outlines typological similarities. The resolution of the war is presented in different ways by different writers, that is, from the process of war revolution to depression, despair, pessimism.

Aldington considers the war as a stage for human-state relations, a clash of regional interests, and the most important is that he is interested in the human, his feelings, his state of mind. The war is a way of depicting the process of human transformation for the writer.

Aldington's artistic portrayal of the First World War is, in fact, deeper than is usually presented. He reveals the real reasons for the origins of the war.

The second chapter ("War's Morality") presents three sub-chapters, the first of which examines love-eros in Aldington's novels and woman-man relations. The first chapter ("The Perception of War in the Process of Development") discusses two issues in details: Aldington's conceptions of war, the artistification of the war in the novel

''Death of a Hero''. In the second chapter, the Aldington's perceptions of the suicide-death dichotomy are revealed, and in the third, the image of a woman in the war and post-war period is studied. It is mainly emphasized that in the horror of war, the individual faces the dangers of physical and mental insanity - suicide, madness, loss of self. In the post-war period, people face the problem of the meaninglessness of life, the impossibility of adaptation to the conditions, the lack of motivation to continue life. There is a demand for re-socialization.

In the third chapter ("The Problem of Human-Society in the Paradigm of War and Post-War") the drama of generational opposition, alienation in the context of the individual and the world, the problem of the conflict between the "lost" and the new generation and the problems of the hero are examined. The main emphasis here is that in the public-political, cultural chaos, the new generation contributes to overcoming the loss, the new life, the transformation of the future, to the creation of the new society and the program of civilization.

The problem of Aldington's generational contrast is depicted in the novels: "Death of a Hero", "All men are Enemies", "Very Heaven", to some extent, " The Colonel's Daughter", "Women Must Work". The above-mentioned issue, with its problems, the preconditions for their origin, the various problems and the influence on the relationship, life and destiny of the generations, the formulas of overcoming have unique explanations. In the mentioned novels, two different generations are presented with different ways of thinking. **Conclusion** summarizes the carried out research and point by point singles out its results and observations. In the end of the thesis the whole **list** of sources and **bibliography** is presented.